ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N1795 - Ա **31 մարտի 2009թ.**

ԱՐԱԲԿԻՐԻ 39-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ. 3 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐԴԱՆ ԿԱՐՊԻՍԻ ԶԱՔԱՐՅԱՆԻ, ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՐՊԻՍԻ ԶԱՔԱՐՅԱՆԻ, ՍԵՐԳՈ ԱՐՍԵՆԻ ԲԱԼԱՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Վարդան Կարպիսի Զաքարյանի (ծնված 16.09.1961թ.), Հարություն Կարպիսի Զաքարյանի (ծնված 18.05.1959թ.), Սերգո Արսենի Բալայանի (ծնված 01.06.1939թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Արաբկիրի 39-րդ փողոցի հ.3 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 711.81քմ, որից 600քմ մակերեսով հողամասը Վարդան Կարպիսի Զաքարյանին, Հարություն Կարպիսի Զաքարյանին, Սերգո Արսենի Բալայանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է (վկայական տրված 14.06.1993թ. հ. 8527): Օրինական հողամասին կից օգտագործվող 111.81քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1995 թվականը, 06.03.2003թ. ժառանգության իրավունքի վկայագիրը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արաբկիր տարածքային ստորաբաժանման 27.11.2008թ. հ. 2091, Երևանի քաղաքապետարանի «Հողի և ունեցվածքի գործառնություններ» ՊՓԲԸ-ի 24.03.2009թ. հ. 20/2-Ե/157 գրությունները, Երևանի քաղաքապետարանի «Քաղաքաշինություն» ՊՓԲԸ-ի 17.03.2009թ. հ. 20-Ել-1854 եզրակացությունը, համաձայն որի Արաբկիրի 39-րդ փողոցի հ.3 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով «Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» հ. 2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Արաբկիրի 39-րդ փողոցի հ.3 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Վարդան Կարպիսի Զաքարյանի, Հարություն Կարպիսի Զաքարյանի, Սերգո Արսենի Բալայանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման

համար անհրաժեշտ օրինական 600քմ մակերեսով հողամասին կից 111.81քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 111.81քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արաբկիր տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Արաբկիրի 39 փողոցի հ.3 և 3/1 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ «Արաբկիրի 39-րդ փողոցի հ. 3 տուն»։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արաբկիր տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Վարդան Կարպիսի Զաքարյանի, Հարություն Կարպիսի Զաքարյանի, Սերգո Արսենի Բալայանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Արաբկիր թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**